

ցոյց տալով չափազանց համարձակ յարձակումներ Ջրա-  
գաշտի կրօնի դէմ, իւր դէմ գրգռում է Խոսրով առաջնի  
բարկութիւնը (531—579): Խոսրովը նրան արսորում է  
Ս.գրքէյջան և Սելևկիայի եկեղեցին կործանում: Կաթուղի-  
կօօը այնտեղից խոյս տալով, կրկին գալիս է Սելևկիա,  
բայց այստեղ նրան բանտարկում են և նա մեռնում է  
բանտում 552 թ.ին, թողնելով գրական աշխատութիւններ:

Ահա այս Մար-Աբան, վեցերորդ գարում յայտնի  
ասորի գիտնականը, ճանապարհորդելով այլ և այլ կողմեր,  
լու ծանօթ արևելեան ազգերի անցեալին և ժամանա-  
կակից կեանքին, սր. Մառի կարծիքով, գրել է այն ժա-  
մանակագրութիւնը, որի ասորերէն բնագիրը առ այժմ  
չէ յայտնուել, այլ մնացել է արաբերէն թարգմանքը: Հայ  
պատմագիրները՝ Անանունը և Խորենացին, օգտուել են  
Մար-Աբայի գրուածքից, իւրաքանչիւրը իւր կողմից զա-  
նազան յաւելուածներ գնելով:

Պր. Մառը արաբերէն բնագիրը ռուսերէն թարգմա-  
նութիւնով պատրաստել է հրատարակութեան համար,  
որը առժամանակ լոյս չտեսաւ նրա ձեռնարկած գիտնա-  
կան ճանապարհորդութեան պատճառով դէպի Սինայ  
լեաօը և Երուսաղէմ:

Մեսրոպ Վարդապետ



«Պ Ա Տ Մ Ա Գ Ի Ր Ք Հ Ա Յ Ո Յ»

Ե Ի

Մ Ի Ք Ա Ն Ի Գ Ի Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն ԵՐ Փ Ը Ի Ս Տ Ո Ս Բ Ի Ի Զ Ա Ն Ի Ի Մ Ը Ս Ի Ն .

Երբ անցեալ տարի պ. Ստ. Մալխասեանն առաջար-  
կեց «Պատմագիրք Հայոց» հրատարակել, նորան դիտել  
տուին, որ այլ կարևոր բաներ կան ժողովրդի համար,  
և որ մեր մատենագիրներն արդէն հրատարակուած

են: Ոչինչ չունինք ա. առարկութեան դէմ. գալով բ. ին՝  
 պէտք է սասնք, որ անհիմն է: Մեր մատենագիրներէրից  
 շատերն սպառուած են արդէն, շատերն էլ Մխիթար-  
 եանք իրենց հասկանալի պատճառներով չեն հրա-  
 տարակել և չեն հրատարակելու: Թէ այս սպառուածները  
 և թէ մանաւանդ մեծագոյն մասը նոցանից, որոնք հրա-  
 տարակուած են Վենետիկի Մխիթարեանց ձեռքով, ժա-  
 մանակին իւրեանց ծառայութիւնը մատուցել են, բայց  
 այսօր այլ ևս չեն լրացնում այն կարիքները, որ պահան-  
 ջոււմ է այդ հրատարակութիւններէր: Այսօր առանց քա-  
 շուելու կարելի է ասել, որ մեզնում եղած հրատարա-  
 կութիւնները գիտական պահանջներին շատ աւելի են  
 գոհացումն տալիս քանց Վենետիկեանները: Ս. Պե-  
 տերբուրգում պ. Ստեփան Մալխասեանի հրատա-  
 րակած Ասողկի պատմութեան (1885) և պ. Կ. Ե-  
 ղեանի Ղևոնդի պատմութեան (1887) բ. տպագրութեան  
 ու Յովհաննու Դարգելի ժամանակագրութեան (1891) նը-  
 ման ոչ մի մատենագիր տակաւին չեն հրատարակել Մը-  
 խիթարեանք, չնայելով կրկնակի տպագրութեանց: Ս. Էջ-  
 միածնում եղած վերջին հրատարակութիւնները՝ Սոկ-  
 րատ, Ուռհայեցի, — Միաբանի, Մանանդեանի և Աճառ-  
 եանի հրատարակածները, ևլն. ոչ միայն պակաս  
 չեն, այլև առաւել են Վենետիկեան հրատարակու-  
 թիւններէր: Թէ որքան պակասաւոր են Վենետիկեան  
 հրատարակութիւնները, բաւական է մի ակնարկ ձգել  
 Նորայր Բիւզանդացու «Կորիւն վարդապետ և նորին թարգ-  
 մանութիւնք» գրուածքում անցողակի ցոյց տուած վրի-  
 պակների վերայ՝ Վենետիկցւոց հրատարակած միայն մի քա-  
 նի մատենագիրներէ մէջ: Մխիթարեանց թերևս այնչափ  
 հմտութիւն չի պակասում, որչափ բարեսխղճութիւն: Ա-  
 ուէք Կորիւնը, 1894 թուին հրատարակուած. այս բ-  
 տպագրութիւնն է, բայց չունի նոյն իսկ լիակատար ցանկ:  
 1891 թ. ին հրատարակուել է Փարպեցու երրորդ տպա-  
 գրութիւնը, բայց ցանկը նոյն սխալներով լի, ինչ-  
 պէս էր նախընթացը. կը տեսնէք՝ մի հրահատը դար-

ձել է երկու, Հայոց թագաւորոզ Շապուհը չգիտես ինչու Բ. է կոչուել, Ներշապուհ Արծրունին ի մի է ձուլուած համանուն պարսկի հետ, Արծրունեաց Մուշէ եպիսկոպոսը Սիւնեաց համանուն քահանայապետի հետ: Այսպէս էլ Փաւստոս Բիւղանդի բ. տպագրութեան մէջ ի մի են ձուլուած երեք Ձիկ, երկու Յուսիկ, երեք Սուրէն, երկու Վաղինակ ևլն. ևլն., չկան և բոլոր յատուկ անունները, զոր օրինակ Արուացաստան, Գոմկունք: Յանկի մասին դեռ կարելի էր շատ բան ասել, բայց այսչափն էլ բաւական է:

Մի բարեխիղճ ձեռնարկութիւն, գիտութեան այժմեան պահանջներին քիչ ու շատ համապատասխան, շատ անհրաժեշտ է, և այդպիսի մի հրատարակութեան համար ի հարկէ հարկաւոր չէ, ինչպէս Պարիզից հնչում են, Վեննա գնալ. դարմանում ենք՝ ինչո՞ւ խորհուրդ չեն տալիս, որ ձեռագիրներն էլ շալակե՛ք և այնտեղ տանենք: Միթէ՞ յիրաւի ձեռագիրներ համեմատել և փոքր ի շատե՛ բարեխիղճ հրատարակութիւն անել Վեննացիք միայն կարող են. բարեբախտաբար անցել են այդ ժամանակները:

Մենք վստահ ենք, որ այդ ձեռնարկութեան համար անհրաժեշտ չէ անպատճառ Մխիթարեանց գիմել: Չենք կարծում մինչև իսկ, որ Վեննայի Մխիթարեանց մասնակցութիւնը գործի յաջողութեան համար մի *conditio sine qua non* լինի, թէև դէմ չենք նոցա աշխատակցութեան՝ ճանաչելով նոցա արժանիքը:

Իմ կողմից կուզէի մի քանի սրբագրութեան փորձեր, ի բաց հանելով այն, ինչ որ Նորայրի վերոյիշեալ աշխատութեան մէջ գտայ, — առաջարկել ի գիտողութիւն Փաւստոս Բիւղանդացու Հայոց պատմութեան հրատարակիչներին:

1. Բիւղանդը՝<sup>1</sup> պատմելով Խոսրով Բ. Կոտակի «մեծ սպարապետ» Վաչէի սպանումը՝ աւերացնում է Գ. ժա. էջ 28.

1. Վենետիկ 1889:

«գՎաչէի զօրավարի փոքրիկ մանկիկ մի զնորուն զորդի ի հայրենի բարձ գահուն մատուցանէին, որում անուն էր յանուն հօր իւրոյ Արտաւազ»:

Արդ, ինչպէս կարող էր Վաչէի որդին իւր հօր անունով Արտաւազը կոչուիլ: Այս անհեթեթութիւնը նկատելով Լատէր՝<sup>1)</sup> Փաւստոսի գերմաներէնի թարգմանիչը, բաց է թողել «յանուն հօր իւրոյ» բառերը:

Գիտենալով որ Վաչէի հօր անունն էլ Արտաւազը է, ինչպէս որ այս ասում է ինքը Բիւզանդը երկու անգամ՝ Գ. դ, էջ 9, Գ. է, էջ 16—կարելի էր, ինչպէս լսեցինք ուրիշներից էլ, այսպէս բացատրել, թէ՛ «իւրոյ» գերանունը վերաբերում է Վաչէին, ուրեմն «յանուն հօր իւրոյ», այսինքն Վաչէի հօր. բայց այս մի շատ քաշկըտուակ բացատրութիւն է. չէ որ այն ժամանակ սպասելու էր աւելի «նորա» գերանունը: Մենք կարծում ենք, որ այստեղ հնագրական շփոթութիւն կայ և հաւու արտագրողը կարգացել է հաւր. անտարակոյս այսպէս է հասկացել և էմինը, որ Բիւզանդի յիշեալ հատուածը այսպէս է թարգմանել. „Le fils du commandant Vasché, jeune enfant, qu'on nommait du nom de son aieul, Ardavast, fut élu à sa place“:<sup>2</sup> Ուրեմն Արտաւազը կոչուել է իւր պապի անունով: Մերձաւորի անունը պահելու սովորութիւնը կայ այսօր էլ Հայոց և օտարների մէջ: Հայոց մէջ ա. և Բիւզանդ. Գ. ժը, էջ 132:

2. Բիւզանդը պատմելով Ներսէս Մեծի ձեռնադրութիւնը Կեսարիայում և նկարագրելով ինչպէս նորան պատուում են և Հայաստան ուղարկում, ասում է Գ. դ, 74.

«Եւ մեծապանչելաշուք յուղարկեցին զնա (զՆերսէս). նոյնպէս և զմեծամեծ նախարարն սատրապն Հայոց»:

1. Des Faustus von Byzanz Geschichte Armeniens, von dr. Lauer, Cöln, 1879, որ ղժբախտաբար այժմ ձեռքի տակ չունենալով՝ հիմնուում ենք մեր յիշողութեան վրայ:

2. Collection des historiens anciens et modernes de l'Arménie, I, 221.

Պարզ է որ այստեղ «սատրապն» միտք չունի, այլ գրուած է նախարար բառը բացատրելու համար, և քանի որ նախարարները շատ էին, ինչպէս և նոյն գլխի սկզբում յիշուած են անունները, — այստեղ պէտք է լինի «սատրապն»:

3. Փառանձեմի համար ասուած է Գ. ծե, 74. «և... գլխեաց եմուտ ի բերդն Արսագերից՝ որ յերկրին Արեալունեաց»:

Արշակունեաց երկիր, այսինքն դաւառ կամ նահանգ՝ անունով տեղի չենք հանդիպում մեր մատենագիրներից ոչ Ագաթանգեղոսի, ոչ Բիւզանդի, ոչ Խորենացու, ոչ Յղիշէի և ոչ Փարպեցու պատմագրութեան մէջ. յայտնի է որ Այրարատի մեծ մասն Արշակունիներին էր պատկանում, բայց այդ նահանգն էլ միշտ իւր յատուկ անունովն է կոչուում:

Արշակունեաց դաւառ գոնեա մի անգամ յիշուած է Կորիւնը. «Եկեալ հասեալ (Մաշթոցի) ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց»<sup>1</sup>, որ Նորայր Բիւզանդացին իւր «Կորիւն վարդապետ և Նորին թարգմանութիւնը»<sup>2</sup> հմտալից գրուածքում ուղղում է «ղուռն», բերելով և այլ օրինակներ Կորիւնից, Բիւզանդից, Ագաթանգեղոսից ևն.: Բուն այս վկայութեանը գալով՝ յաջորդ խօսքերը ապացուցանում են պ. Նորայրի ենթագրութիւնը: Բացի այդ, մեր մատենագիրներից Խորենացին Բ. դ. ցոյց է տալիս, թէ ինչպէս Երասխաձորն Արշարունիք կոչուեցաւ Արշաւիր Կամսարականի անունով, այդ դաւառը Տրդատից ժառանգութիւն ստանալուց յետոյ. իսկ որ Արտագերս Կամսարականներին էր պատկանում, երեւում է Խորենացու Գ. լա. գլխից: Յատկապէս Բիւզանդն Արշաւիր Կամսարականի համար ասում է իշխան «Շիրակայ և Արեարունեաց գաւառին» (Բիւզ. Գ. ժա, 28). առանց դաւառի յիշուած է և այլ տեղերում. իսկ Գ. ժթ,

1. Վենետիկ, 1894 էջ 13—14:

2. Տիփլիս, 1900 էջ 62:

էջ 133 պարզ ասում է. «Թագաւորն Արշակ հրաման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Ար-  
սագերս անուն»:

Տարակոյս չկայ ուրեմն, որ վերոյիշեալ «Արշակունեաց  
գաւառը» պէտք է ուղղել «Արշարունեաց գաւառ»:

4. Ե. Ե, 207. Շապուհ պարտուելով հայերից Պարս-  
կաստան է վերադառնում և պատմում հիացմամբ հայոց  
քաջութեան և կռուելու մասին, թէ ինչպէս նոքա հռո-  
մոց լեգէոնին ապաստանելով՝ «և անտի սակաւիկ մի ոգի  
առեալ, դարձեալ ելեալք մարտնչէին, մինչև անմի զգօրս  
Արանց առնէին»:

Մենք ունինք «քաջ արանց», «արանց արքայ», «արանց»  
գլուխ կացեալ», բայց այստեղ, կարծում ենք, «Արանց»  
պիտի լինի «Արեաց»:

Որ պարսիկներն իրենց Արիք, իսկ միւս աղգերին Ա-  
նարիք էին կոչում, այդ շատ յայտնի է և երևում է մեր  
Ե. դարու պատմագիրներին:

5. Բիւզ. Ե. եդ, էջ 215. «Ապա ինդրէր զվրէժն  
մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և ի  
Փայտակարան քաղաքէ, փոխանակ զի և նոքա նշկահե-  
ցին ստեցին արքային Հայոց»:

«Նշկահեցին, ստեցին» բառերը ցոյց են տալիս, որ վե-  
րոյիշեալ աղգը կամ երկիրը պէտք է Հայոց Թագաւորին  
պատկանում լինէր: Որ Փայտակարանը Մեծ Հայքի 15  
նահանգներից մինն էր, — տես Խորենացու աշխարհագրու-  
թիւնն, այլև պատմութիւնը Գ. դ. էջ 189, դ. էջ 190,  
դ. էջ 192, Սանատրուկի ապստամբութիւնը, — այս մասին  
կասկած չի կարող, և ինդիրն այստեղ «Պարսից»  
բառն է: Պարսից «նշկահելու և ստելու» մասին խօսելն  
անտեղութիւն է, քանի որ նոքա Հայոց Թագաւորին չեն  
պատկանել: Միւս կողմից, «Փայտակարան քաղաք», որի  
անունով հաւանօրէն և նահանգն է կոչուել, չկայ Պարսից  
երկրում, այլ կայ Կասպից երկրում. «Մինչ ի սահմանս

Կասկից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց», ասում է Ազաթանգեղոս<sup>1</sup>: Նոյն այդ գլխի վերնագիրն է Բիւզանդում «յաղաղս Կասպից», ապստամբած գաւառների մէջ էլ Դ. ծ, էջ 164 ասում է՝ «յետս եկաց յարքայէն Հայոց և աշխարհն Կազբից»: Պարզ է ուրեմն, որ այստեղ փոխանակ Պարսից պիտի լինի Կասպից:

6. Բիւզ. Ե. լոգ. էջ 221 «Այր՝ (Ներսէս Մեծ) զորմէ ամենայն մարդիկ աշխարհին Հայոց կախեալ կային զնմանէ վասն արդար գործոցն»: Աւելորդ էլ է ասել, որ այստեղ «աշխարհին» պէտք է լինի, և մենք այս յառաջ բերինք այն պատճառաւ միայն, որ չէ յիշուած Բիւզանդի բ. տպագրութեան «վրիպակ»ների կարգում:

7. Բիւզանդը Ե. լէ, պատմում է, թէ ինչպէս Մանուէլ Մամիկոնեանը այպանուելով Պարսից թագաւորից և հալածուելով Պարսկաստանից՝ Հայաստան եկաւ և Վարադղատին հայոց սահմաններից հալածեց, որը «չոգաւ գնաց ի յերկիրն Յունաց», և ինքը Մանուէլը կառավարում է երկիրը Արշակի և Վաղարշակի և սոցա մօր Զարմանդուխտ տիկնոջ հետ: Նոյն գլխի վերջն, էջ 251, յաւելացնում է Բիւզանդ. «Բայց յորժամ տեսանէր Մանուէլն զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւորին Յունաց, ածեալ զմտաւ իւրով թէ արժան է նմա դէթ զմի ոք թիկունս աւնել նմա, ապա խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, և կամեցաւ թիկունս աւնել զարքայն Յունաց»:

Մի քիչ տարօրինակ է, թէ և անհնարին չէ, որ Մանուէլը Յունաց կողմից դուրս քշելուց յետոյ նոյն Յունաց թագաւորի օգնութեան դիմէ. բայց երբ յաջորդ գլխում Ե. լը, էջ 252 պատմում է, թէ տիկին Զարմանդուխտը և Մանուէլ սպարապետը դեսպանութիւն են ուղարկում

1. Թեֆլիս 1883, էջ 485:

«հրովարտակօք, ընծայիւք և պատարագօք առ թագաւորն Պարսից», ուրեմն վերեւումն էլ երկրորդ անգամ պէտք է փոխանակ «Յունաց» լինի «Պարսից»:

8. Բիւզանդ. Զ. ա. էջ 270: Պատմադիրը պատմելով այս գլխում Հայաստանի բաժանումը, Խոսրովի Պարսից թագաւորից հայոց նախարարների խնդրանքով թագաւոր նշանակուիլը, շարունակում է այսպէս. «Իբրև ետես Արշակ արքայ զնոսա, մերժեցաւ տեղի ետ չողաւ քնաց ի սահմանս Յունաց. և էին թիկունք Արշակայ թագաւորին Հայոց. և Խոսրովու՝ թագաւորն Պարսից»:

Վերոյիշեալից և բառերի դասաւորութիւնից — «էին թիկունք . . . Խոսրովու թագաւորն Պարսից», հետեւում է, որ պէտք է լինի այսպէս. «և էին թիկունք» Արշակայ թագաւորն Յունաց (և Խոսրովու՝ թագաւորն Պարսից):

9. Բիւզ. Գ. բ. էջ 67. «Յայնմ ժամանակի խնդիր ելանէր Արշակ»: Ընդգծուած դարձուածքն անյայտ է մեզ գրաբանում. անշուշտ պէտք է լինի «ի խնդիր ելանէր». ի տառի դուրս ընկնելու պատճառ է դարձել, երևի, նախընթաց «ժամանակի» բառի վերջի ի գերը:

10. Նոյն գլխում, էջ 67. «Ի ժամանակս խուլուրեանն Տիրանայ»: Տիրանի խլութեան մասին պատմութիւնից ոչինչ յայտնի չէ. պատմագիրն այստեղ պարզապէս ակնարկում է Յուսիկի (Գ. ժբ.), Իանիէլի (Գ. ժդ.) սպանումը, Ռըշտունեաց և Արծրունեաց ցեղի կոտորածը (Գ. ժբ.) Տիրանի ձեռքով կամ միջոցով, ուստի պիտի լինի խալութեանն (=խուլութիւն), որ նշանակում է դժութիւն, խենդութիւն:

11. Բիւզ. Գ. ժբ, 30. Յիշում է տասներկու մեծամեծ նախարարներ, որոնք Վաղարշ հաղարապետի հետ Յուսիկին ուղեկցեցին Կեսարիա և վերադարձան «Այրաբատեան աշխարհը»: «Եւ զիշխանսն երկօսին, եւ նոցուն

Ծովագն, յառաջ արձակէին աւետաւորս առ արքայն»։ Ընդգծուած բառերը միտք չեն յայտնում։ Ի նկատի առնելով, որ իշխանների մէջ յիշուում են 1. «Ձարեհ իշխան, նահապետն մեծի Ծովագ» և 2. «Վարազ Շահունի իշխանն Ծովագ աշխարհին», «և նոցուն Ծովագն» պէտք է լինի «Երկոցուն Ծովագն», ուրեմն նախարարները նախապէս արքային իբրև աւետաւոր են ուղարկում «Երկու Ծովիքի երկու իշխաններին»։

12. Անշուշտ հրատարակիչները շատ բաներ փոխադարձաբար կուղղեն մեր այն մատենագրների միմեանցից արտագրած հատուածներից, որ կան Ագաթանգեղոսի, Կորիւնի և Փաւստոսի մէջ։ Պ. Ստեփան Մալխասեանի «Ուսումնասիրութիւն Փաւստոս Բիւզանդի պատմութեան» (1896 Վեննա) մէջ չգտնելով ի թիւս Բիւզանդի և Կորիւնի այլ նման հատուածների, որոնք համեմատուելով փոխադարձաբար միմեանց կուղղեն և կը լրացնեն, յառաջ ենք բերում հետեւեալ ցարդ չնկատուած հատուածը։

Քիւզանդ Գ. դ. էջ 80.

Կամ որպէս նոյն իսկ Պողոս բարեաց գործոց նախանձաւոր լինէր, ստիպէ ամենեցուն աւելովն՝ երբ զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հոգևորացն։ Որոյ զյօժարութիւնաքայեցւոցն վասն պաշտման որբոցն ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալս յորդորեաց. այլև համարձակութիւն իսկ տայ անխափան ի բարեացն առաքինութիւնս. թէ լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս։

Դարձեալ փութայ ամենեքումբք հանդերձ ըստ Քրիստոսի հետոցն վարել. Հայեցարուք, ստէ, ի զօրագլուխն

Կորիւն էջ 12—14.

• որպէս ի նոյն իսկ զբարեաց գործոց նախանձաւորս լինել ամենեցուն՝ ստիպէ ասելովն, թե «Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լինել ամենեցուն հոգևորացն»։ Որոց զյօժարութիւն Աքայեցւոց վասն պաշտաման որբոցն ի Մակեդոնիա պատմեալ նախանձեցուցեալ յորդորեաց։ Այլև համարձակութիւն իսկ տայ անխափան ի բարեացն առաքինութիւն. թէ՛ «Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս»։ Այլև նմանօղ իւր եւ տառն քսիպի լինել։

Դարձեալ փութայ ամենեքումբք հանդերձ ըստ Քրիստոսի հետոցն վարել. «Հայեցարուք, ստէ, ի զօրագլուխն հաւատոց,

հաւատոց և ի կատարիչն Յիսուս. դարձեալ՝ թէ յիշեցէք զառաջնորդս ձեր եւ զվերակացուս ձեր ի սեր, որք խօսեցան ձեզ զբանն կենաց. հայեցարուք յելս գնացից նոցա, և նմանող լերուք հաւատոց նոցա: Եւ միանգամայն՝ թէ զայս խորհեսցի իւրաքանչիւր որ ի ձէնջ, որ ի Քրիստոս Յիսուս. եւ դարձեալ՝ թէ սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել:

Իսկ ցանկալի եղբայր տեառն Յակոբոս զհամօրէն իսկ զգուճուքս սրբոցն հանգերձ սրբասէր տերամբն յօրինակ առեալ ի թղթին իւրում, ասելովն՝ եթէ օրինակ առէք, եղբարք, զչարչարանաց երկայնամտութեանըն զմարգարէսն՝ որք խօսեցան յանունն տեառն. զհամբերութիւնն Յոբայ լուարուք, և զկատարումն տեառն տեսէք:

Մեր կարծիքով բանաբազր Կորինն է և ոչ Բիւզանդը, ինչպէս պնդում է պ. Մալխասեանը: Բիւզանդը պատմելով Ներոսի գործերը այս միւսնոյն գլխում, վերեւում մի քանի անգամ յիշում է, թէ Ներոսէս Մեծը «ըստ մարգարէիցն և կամ ըստ առարելոցն նմանութեան ողորմածութիւնս ուսուցանէր», էջ 79, և թէ պէտք է բարիք գործել, աղքատներին խնամել, դարմանել՝ էջ 75, 76, 77, 78, 79 և ըն. «և զամենայն մարդ պատրաստական առ բանն Աստուծոյ առնէր». ապա դալիս են օրինակներ Գործքից (Այծեմիկ), աւետարանից և Պօղոս առ. -ից: Իսկ Կորինը իւր

և ի կատարիչն Քրիստոս»<sup>1</sup>. Եւ դարձեալ, թէ՛ «Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան զբանն Ասուծոյ»<sup>2</sup>. հայեցեալ յելս գնացից նոցա, նմանող եղերուք հաւատոցն»: Եւ միանգամայն, եթէ «Չայս խորհեսցի իւրաքանչիւր որ ի ձէնջ որ եւ ի Քրիստոս Յիսուս»: Հանգոյն սմին եւ Ղուկաս յսկիզբն առաւելագործ մասեցինն դնէ:

Իսկ ցանկալի Տեառն եղբայրըն Յակոբոս, զհամօրէն իսկ զգուճուքս սրբոց հանգերձ սրբասէր տերամբն յօրինակ առեալ՝ ի թղթին իւրում ասէ, եթէ, «Օրինակ առէք չարչարանաց եւ յերկայնամտութեան զմարգարէսն, որ խօսեցան յանունն տեառն. 5 զհամբերութիւնն Յոբայ լուարուք, և զկատարումն տեառն տեսէք»:

1. Եբր. ԺԲ. 2, որ ունի «Յիսուս»:

2. Եբր. ԺԳ. 7:

3. Յակ. Ե. 11: Բիւզանդը և Կորինը չունին «անաւասիկ երանեմք համբերողաց». մինչդեռ Կորինը չունի և «եղբարք»:

այս հատուածից վերև արդէն երկու անգամ Պօղոս առ.-ին յիշում է, այս հատուածում էլ երրորդ անգամ: Բիւզանդի այս հատուածը նոյն իսկ արսափին կերպով կամ շաղկապով կապուում է նախընթացի հետ. իսկ Կորինը փոխ առնելով այս հատուածը, լաւ չէ հասկացել Բիւզանդի միտքը, որովհետև՝ մինչդեռ Բիւզանդի հատուածը տրամաբանօրէն շարունակուում է, թէ Պօղոսն էլ բարի գործի նախանձաւոր էր, որն և ստիպուում է ամենքին ասելով «ղհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հոգևորացն»<sup>1</sup>,— Կորինը Պօղոս բառի տեղ դնում է զի անխմաստ շաղկապը, որ բոլորովին աւելորդ է: Եթէ այս զի-ն պէտք է լինի զիս, ինչպէս ձեռագրերի համեմատութիւնից ստացել է շնորհունակ Միաբանը, այն ժամանակ առաւել ևս հաստատուում է մեր ենթադրութիւնը: Կորինը կարկատել է Պօղոսի տեղ «զիս»՝ իրեն: Անկանոն և անհարթ ոճով սկսելով՝ Կորինը նոյն ձևով շարունակուում է. այլ և Բիւզանդի «ամենեցուն» բառը սխալմամբ յատկացնում է Պօղոսին՝ կրկնելով և կցելով սորա «հոգևորաց» բառին: Կորինն այս հատուածում Բիւզանդի բերած Ս. Գրքի վկայութիւնները կրճատուում է, մի մի բառ փոփոխում, դուրս ձգում և կամ յարմարեցնում: Այս բոլորից յետոյ դարմանալի չէ, որ Կորինը չունի Յակովբ առաքելի վկայութիւնից բնագրի յերեք բառը (տես էջ 250, ծանօթութիւն 3), որովհետև Բիւզանդն էլ չունի: Այսպէսով ուրեմն Բիւզանդը Կորինից առաջ է և հաւանօրէն Արչակունեաց թագաւորութեան վերջերում է ապրել, որովհետև վեցերորդ դարութեան ա. գլխում պատմելով Արչակունեաց բաժանումը և յիշելով Արչակին (Գ.) և Խոսրովին յարում է. «և բազում գաւառք յերկոցունցն հատան. նուազեաց, բաժանեցաւ, ցունեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն եւ յայայն»:

Ս. Կանայեանց